

Հայ ժողովրդի պատմության
Ժամանակագրություն

1540 փետրվար 5

Ծնվեց հայ պատմագիր, բանաստեղծ, մանկավարժ Սիմեոն Ապարանեցին: (Վախճ. 1614թ.-ին)

1592 մարտ 29

Ծնվեց հայ առաջին աշուղ-երգիչ Նահապետ Քուչակը:

1636 մարտ 26

Կըզըլբաշները վերագրավում են Երևանի բերդը:

1650 հունվար 4

ճարտարապետական հուշարձան Փոքր Վեդի գյուղի մոտ՝ Խոր Վիրապում: Շոշ գյուղում կայացավ Ղարաբաղի Դիզակ և Վարանդա գավառների աշխարհիկ և հոգևոր առաջնորդների ժողով:

1661 մայիս 27 Ծնվեց միջնադարյան հայ բանաստեղծ, աշուղ Նաղաշ Հովնաթանը: (Վախճ. 1722թ.-ին):

1676 օգոստոս 25 Ծնվեց հայ հասարակական, մշակութային և եկեղեցական գործիչ Մխիթար Սեբաստացին: (Վախճ. 1749թ.-ին):

1722 հունիս 14

Ծնվեց հայ բանաստեղծ-աշուղ Սայաթ-Նովան (Վախճ. 1795թ.-ին):

1723 հուլիս 13

Թուրքերը գրավում են Թիֆլիսը:

1724 մարտ 24 Գանձակում պայմանագիր է կնքվում հայ և ադրբեջանցի բնակչության միջև՝ ընդդեմ թուրքերի:

1725 փետրվար 10 Թուրքական 6000-անոց մի բանակ մտնում է Վարանդա և զրեթե ամբողջովին ոչնչացվում:

1726 հոկտեմբեր 10 Սարու Մուստաֆա փաշայի զորաբանակը գրոհում է Շուշի քաղաքի վրա և 8-օրյա մարտերից հետո գրավում:

1728 փետրվար 20

Վախճանվեց հայ զորավար Դավիթ Բեկը:

1735 հուլիս 8

Եղվարդի ճակատամարտում թուրքերը ջախջախիչ պարտություն են կրում:

1738 դեկտեմբեր 4

Կ. Պոլսում ծնվեց պատմաբան Միքայել Չամչյանը: (Վախճ. 1823թ.-ին):

1750 փետրվար 9

Ծնվեց հայ հասարակական գործիչ Հարություն Ծնավոնյանը: (Վախճ. 1824թ.-ին):

1763 փետրվար 9

Էմինը Մոսկվայից ուղևորվում է Վրաստան՝ անդրկովկասյան ժողովուրդների ազատագրական պայքարը կազմակերպելու համար և մի տարի անց հեռանում է Վրաստանից:

1765 նոյեմբեր 14

Ծնվեց ռուսական բանակի զեներալ, իշխան Պետրոս Բագրատյանը: (Վախճ. 1812 թ.-ին):

1766 օգոստոս 1

Սիմեոն Երևանցի կաթողիկոսը կոնդակ է ուղարկում Եկատերինա II-ին՝ հայ ժողովրդին օգնելու խնդրանքով:

1768 հուլիս 30

Եկատերինա II-ի հրովարտակը Էջմիածնի իրավունքների մասին:

1769 հունիս 8

Մովսես Սարաֆյանի կազմած Հայաստանի ազատագրման ծրագիրը ներկայացվում է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարություն:

1780 հունվար 10

Հովհաննես Լազարյանը Հայաստանի ազատագրության մասին զեկուցագիր է ներկայացնում Ա. Սուվորովին:

հունվար 20 Հիմնադրվում է Նոր Նախիջևանի հայկական գաղթօջախը:

1795 հունիս 16

Ծնվեց ռուս գրող, դիվանագետ Ալեքսանդր Գրիբոեդովը: Նա ջանքեր էր գործադրում հայերին Պարսկաստանից վերադարձնել Հայաստան: (Վախճ. 1829թ.-ին):

սեպտեմբեր 12 Աղա-Մուհամադը գրավում է Թիֆլիսը:

դեկտեմբեր 13 Ջավադ խանը Գանձակը հանձնում է ռուսներին:

1796 սեպտեմբեր 25

Աստրախանում ծնվեց Հարություն Ալամդարյանը: (Վախճ. 1834թ.-ին):

1797 մարտ 13

Աղա-Մուհամադը գրավում է Շուշին և սպանվում է Շուշու բերդում:

(Շարունակելի)

Լուրեր

Իրան

2005 ԹՎԱԿԱՆԻՑ ԻՐԱՆԸ ԳԱ՞Ջ Է ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

ԹԵՀՐԱՆ, 6 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: 2005 թվականից սկսվելու է Իրանից գազի մատակարարումը Հայաստանին, ըստ որում, յուրաքանչյուր խորանարդ մետր գազի դիմաց Իրանը Հայաստանից կստանա 3 կվտ էլեկտրաէներգիա: Ըստ իրանական «Միդր» լրատվական գործակալության, գազի մատակարարումը կսկսվի տարեկան 500 միլիոն խորանարդ մետրից, ապա կհասնի 1.5 միլիարդ խորանարդ մետրի: Գազամատակարարումն իրականացվելու է խողովակաշարով, որի կառուցման խնդիրը վերջնականապես պիտի լուծվի մինչև մայիսի վերջը:

Հայաստան

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵԿՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ



Սույն թվականի մարտի 31-ից ապրիլի 2-ը Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական լիազումար ժողովը՝ նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի:

Օրակարգի եւ նախորդ ժողովի արձանագրության ընթերցումից ու հաստատումից հետո ատենապետությամբ ԳՀԽ երիցագույն անդամներ Տ. Վաչե արք. Հովսեփյանի եւ Տ. Գյուտ արք. Նազգաշյանի ժողովը քննության առավ ազգային եկեղեցական կյանքին վերաբերող խնդիրներ:

Թեմական հարցերի շարքում Գերագույն հոգեւոր խորհուրդը գոհունակությամբ արձանագրեց, որ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմում ստեղծված անցանկալի կացությունը վերացել է, եւ թեմը գլխավորությամբ առաջնորդ Տ. Եղրաս եպս. Ներսիսյանի

կազմակերպում է ազգային եկեղեցական իր բնականոն կյանքը:

Այնուհետեւ հետեւեց Արեւմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ եւ Փարիզի առաջնորդ Տ. Գյուտ արք. Նազգաշյանի ղեկույցը Ֆրանսիայում Հայ եկեղեցու թեմական կառույցների վերակազմավորման մասին: Սրբազան հայրը հայտնեց, որ կանոնադրությունը ներկայացված է Ամենայն հայոց հայրապետին առ ի տնօրինություն: Գերագույն հոգեւոր խորհուրդում Վեհափառ հայրապետի առաջադրմամբ կանոնադրության ուսումնասիրման համար ստեղծվեց հատուկ հանձնախումբ:

Գերագույն հոգեւոր խորհուրդում քննության առնվեց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության կողմից Կանադայի Հայոց թեմում հակակառուցական թեմական զուգահեռ կառույց հաստատելու խնդիրը: Գերագույն հոգեւոր խորհուրդն իր վերաբերմունքը խնդրի նկատմամբ արտահայտեց ընդունված հայտարարությամբ: (Հայտարարությունը կցվում է այս հաղորդագրությանը, տես 2-րդ էջ):

Ժողովի ընթացքում քննարկվեցին եկող տարի Գրերի գյուտի 1600-ամյակի տոնակատարության եւ Եղեռնի 90-ամյակի տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպական խնդիրներ: Որոշվեց մասնավոր հանդիսություններով նաեւ նշել Վազգեն Ա երջանկահիշատակ կաթողիկոսի վախճանման 10-ամյա տարելիցը:

«ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐԱՑՆՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՒՄԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԵՋ»

Գերագույն հոգեւոր խորհուրդը Կանադայի Հայոց թեմի թեմական խորհրդից խորին մտահոգությամբ տեղեկացավ, որ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսությունը ցավալի իր վախճանին է հասցրել Ամենայն հայոց հայրապետության կանոնական տարածք հանդիսացող Կանադայի հայոց թեմում զուգահեռ վարչական կառույց հաստատելու գործընթացը՝ հակառակ Ամենայն հայոց կաթողիկոսի եւ Գերագույն հոգեւոր խորհրդի եղբայրական հորդորների:

Սույն քայլը եկեղեցաբանական եւ նվիրապետական առումներով, ինչպես եւ հայ ժողովրդի հոգեւոր միասնության անխաթարության պահպանության իմաստով չունի որեւէ արդարացի բացատրություն եւ հիմնավորում:

Երեւույթն ավելին է, քան հակակառուցական եւս մեկ թեմի ծնունդը: Այն հաստատում է, որ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսությունը պատրաստ չէ վերանայելու 1956 թվականին որդեգրած պառակտողական ոգին եւ Մայր աթոռի հետ համախորհուրդ վերականգնելու կանոնական վիճակը Հայ եկեղեցուց ներս: «Մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ եկեղեցի» կարգախոսին իր նվիրվածության հավաստիացումներին հակառակ, Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսությունը «նոր վերադասավորումներով» հետեւողականորեն փորձում է ընդարձակվել եւ ամրագրվել սառը պատերազմի օրերին քաղաքական շարժառիթներով Ամենայն հայոց կաթողիկոսությունից զրաված թեմերում խորացնելով բաժանումը Հայ եկեղեցու մեջ եւ վտանգելով 1988 թվականից ի վեր Մայր աթոռի հետ բարելավված հարաբերությունները:

Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսությունը չի ցանկանում տեսնել արդի աշխարհում փոփոխված իրավիճակները, Հայրենիքի անկախության իրողությամբ պայմանավորված հրամայականները եւ արժեւորել նոր ժամանակների ուզին, որ պահանջ է առաջադրում վերականգնել ու անխաթար պահել Հայ եկեղեցու եւ ազգի միությունը:

Հայ եկեղեցու գերագույն եւ անանջ արժեք հանդիսացող աշխարհասփյուռ մեր ժողովրդի միասնականությունն ու միությունը խախտելու ցանկացած փորձի Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը հակադրելու է այդ միությունն անխախտ ու անսասան պահելու վճռական իր հաստատականությունը:

Սուրբ Էջմիածինը դիմում է Կանադայի եւ Մայր աթոռից գրավված բոլոր թեմերի հավատավոր զավակներին, հայտնելով որ անփոփոխ է իր հայրական սերը բոլորի հանդեպ, քանզի ինչ ձեւակերպումներով եւ առ «ժողովրդի կամք» վաղուց հայտնի հղումներով էլ փորձ արվի արդարացնել նման քայլերը, անտարակույս է, որ ոչ մի ժողովուրդ չի կարող ունենալ պառակտված լինելու ցանկություն:

Մայր աթոռը վերստին եղբայրաբար ողջախոհության է կոչում Կիլիկիո կաթողիկոսությանը եւ ողջունում ամեն քայլ՝ ուղղված երկփեղկվածության հաղթահարմանը եւ կանոնական վիճակի վերահաստատմանը Հայ եկեղեցուն եւ հրավիրում է իր զավակներին նախանձախնդիր ու միասնական լինելու բարդ ժամանակների թելադրանքով ծնունդ առած երկպառակության շուրջ կեսդարյա խնդրի կարգավորման ճանապարհին: «Սիրո գերագահություն»՝ ահա Մայր աթոռի գերագահության խորհուրդը ինչպես երեկ, այնպես էլ այսօր եւ հավիտյան:

ԳԵՐՎՊՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ,
ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՐ. ԷՋՄԻԱԾԻՆ

Հայոց Սփյուռք

Նոր նշանակում Կալիֆոռնիայի նահանգում

Կալիֆոռնիայի նահանգապետ Առնոլդ Շվարցենբերգը նախկին նահանգապետ Ջորջ Դոքմեջյանին նշանակել է բանտային բարեփոխումների հանձնախմբի նախագահ: Այս հանձնախմբի նպատակն է զբաղվել նահանգի երիտասարդ հանցագործների հարցերով: «Երկաթե մարդ» անունով հայտնի Ջորջ Դոքմեջյանը 1983-91 թթ. իր պաշտոնավարության շրջանում կարողացել է ստեղծել բանտային լավագույն համակարգը եւ նահանգի մեջ օրինականություն հաստատել: Նրա պաշտոնավարության տարիներին նահանգի բանտարկյալների թիվը 40 հազարից հասավ 100 հազարի:

Միջազգային

ԴՈՒԴՈՒԿԱՅԱՐ ԼԵՎՈՆ ՄԻՆԱՍՅԱՆԻ «ՂԵ ՅԱՍԱՆԸ» ՄԵԼ ԳԻԲՍՈՆԻ «ՀԻՍՈՒՄԻ ՏԱՆՁԱՆՔՆԵՐԸ» ՖԻԼՄՈՒՄ

ԹԵՂՐԱՆ, 5 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Քրիստոսի տանջանքները» («The passion of Christ») ֆիլմում ֆիզիկական տանջանքի պահերին, մինչ Քրիստոսն ուղղվում է Գողգոթա, մի հրեա կին գթում է Հիսուսին եւ նրան մեկնում մի բաժակ ջուր: Տառապանքի եւ

կարեկցանքի խառն զգացումների այդ պահին լսվում են յուրաքանչյուր հայի համար հարազատ հնչյուններ՝ դուդուկը եւ «Դլե յամանը»: Դուդուկի հնչյունները շարունակվում են նաեւ ֆիլմի այլ դրվագներում՝ ձայնային արտահայտություն տալով ֆիզիկական աննկարագրելի տանջանքների:

Ինչպես վկայակոչելով Բեյրութի «Ազդակ» թերթի հաղորդագրությունը գրում է Թեհրանի «Ալիք» հայկական օրաթերթը, Մել Գիբսոնի ֆիլմում հայկական հնչյուններ ներմուծող դուդուկահար Լեւոն Մինասյանը ծնվել է Մարսելում: Հայաստան այցելելուց եւ իր արմատների հետ վերահաղորդակցվելուց հետո նա որոշել է զարգացնել դուդուկ նվագելու իր տաղանդը: Ջիվան Գասպարյանի կողքին, նա համարվում է աշխարհի լավագույն դուդուկահարներից մեկը:

Լեւոն Մինասյանը համերգներ է տվել ամբողջ աշխարհում եւ իր ներդրումն է ունեցել հռչակավոր երաժիշտ Փիթեր Գաբրիելի «Secret World» ձայնապնակում: Նրա նվագը հնչել է նաեւ Ռավի Շանքարի, Մանու Քաչի, Անրի Վերնոյի եւ Մարտին Սկորսեգիի ֆիլմերում: Մինասյանն ունի նաեւ իր սեփական ձայնապնակը՝ «Դուդուկ, սահմաններից անդին» («The duduk. behind borders») (1999և2003), որ ընդգրկում է «Հով արա եզը», «Տեր ողորմեա», «Երագ», «Հորովել», «Լուսնյակ գիշեր», «Օջախում», «Դլե յաման», «Իմ յարիս» եւ «Սիրեցի, յարս տարան» երգերը:

«Քրիստոսի տանջանքները» ֆիլմի երաժշտությունը պատկանում է Ջան Դեբնիին, երգչախմբային երգեցողությունը՝ Տրանսիլվանիայի Պետական ֆիլհարմոնիկ նվագախմբին, իսկ դուդուկի նվագը՝ Լեւոն Մինասյանին:

Նշվում է, որ ամերիկացի հանրահայտ բեմադրիչ Մել Գիբսոնի վերջին ֆիլմը մեծ իրարանցում է առաջացրել հրեաների մեջ: Վերջիններիս կարծիքով, ֆիլմը միտումնավոր հրեաներին է վերագրում Քրիստոսի սպանությունը:

Հասարակական Խարբերդի Անտոնեան Եղայի Պատմածը (ծնւ. 1910 Թ.)

Ծնողներս հողագործ մարդիկ էին: Կը յիշեն, ծննան օրերին մեծ վերմակ մը կը դնէին սեղանի վրայ, տակը չանախով վառելիքը կը դնէին, կը վառէին, բուրսին կը նստէին: Կողքի տունը թուրք միւղիրի տունն էր: Մեր տունը երկու հարկանի էր, կտուրից էինք ելք ու մուտք անում: Գիշեր մը թուրք միւղիրը եկաւ մեր տունը, հորս ասաց.- Աղաբե՛կ ջան, էսքան տարի իրար հետ հաց ենք կերել, չեն ուզում վատ բան ըլլա ձեզ, կառավարութենն հրաման եկած է, որ հայերուն պիտի աքսորեն, պիտի կտորեն...

Հերս լռում էր, ձեն չէն հանում: Մերս նրան սուջուխ-բաստուրմա էր հիւրասիրում:

Միւղերի երթալեն վերջը հայրս եղբորը ըսաւ.- Բ...քնեն միւղիրի բողագը, կուզէ՛ մենք երթանք, ինքը մեր տունը գրաւէ:

Միւս օրը, գիշերը եկան թուրք ասկետները: Դուռը կտորելու չափ ծեծում էին ու ասում.-Գյաւու՛ր, ձեզ աքսորենք:

Պապաս վախեն կոշիկները հանեց, իւրիկը մտաւ: Ձաբիթները ներս մտան, տեսան կոշիկները, ըսին.- Գյաւուրը տա՛նն է...

Բացին իւրիւր, հրացանի կոթով խփեցին պապայիս, պատի միջից քաշեցին, հանեցին դուրս ու տարին... Է՛, անցեալս որ յիշում եմ, գիտեմ, որ վերքերս թագացան: Է՛, մենք ի՛նչ տանջանքներ ենք քաշել, ի՛նչ բաներ ենք տեսել...

Պապայիս քաշեցին տարան, միւս օրը լսեցինք, որ գիւղի բոլոր հայ տղամարդկանց տուններն հաւաքել, տարել էին, նաւթ էին լցրել, վառել, ոչնչացրել էին:

Միւս օրը էկան, մեզի հաւաքեցին, ոչխարների պէս քշեցին, ո՞ր՝ չգիտեմք: Ճամձին հագիւ քայլում էինք, ընկնում, կանգնում էինք: Երեխերքը մայրերի փեշերից կախուում էին, չէին կարողանում քայլել...: Մի հաւուզ կար, վրան աւաւան-դափան կար փորագրած, հոնտեղեն ջուր խմեցինք... Ջաբիթներն իրենց ձիերուն ոտքերի տակը քյոնուրհացի կտորներ էին շարտում, իսկ մենք՝ իրար ձեռքից էինք խլում, բոլորս ալ անոթի էինք...: Մեզ Դեր Ջորի չորերն էին տանում...

Պապաս շատ հարուստ մարդ է եղել: Մեծ մայրս եօթը աղջիկ է ունեցել՝ մէկը է, վեցը ողջ են մնացել: Բոլորն ալ շատ գեղեցիկ են եղել: Ժամանակին պապս ամէն ինչը ծախել էր, իր ընտանիքը եւրոպական հպատակ դարձել էւ չորս աղջիկներին տարել Ամերիկա, իսկ երկու աղջիկները, ամուսնացած ըլլալով, մնացել էին Խարբերդում: Անոնցմէ մէկը մայրս էր, մայրս ալ՝ Աննա մորաքոյրս: Թուրք զաբիթները, երբ տեսան, որ մենք եւրոպական հպատակ ենք, մեզ ազգտեցին, միւսներին՝ իզուր-թոզով տարան, կորցրեցին: Պապաս էդ մի լաւութիւնը արել էր մեզ: Մենք մնացինք ճամփին, մի թուրքի գիւղում: Գիշերը գալիս էին, դանակը պահում վրաներս, ձայն հանելու իրաւունք չունէինք, թալանում էին մեր ոսկեղենը, մեր խալիները, ամէ՛ն ինչը...: մայրս ինձ ու քրոջս տարաւ, տաւ թուրք որբեւայրի կնոջ մը, որ մեզ պահի. գոնէ մենք ողջ մնանք: Ամէն թուրքի տունին առջեւը չորս-հինգ հատ որբ երեխայ կար մեռած, ընկած, տկլոր ու սոված...

-Բաջի՛, ալլահըն սեւերսեն բիր փատչայ էքմեդ վեր (Քոյրի՛կ, Աստծոյ սիրուն, մի պատառ հաց տուր),- ասում էին էդ, որբ երեխերքը: Եթէ թուրքերը խղճում, տալիս էին լաւ, թէ չէ՝ սովից պատերի տակ ընկնում, մեռնում էին...

Էդ թուրք խանումի մօտ ես մնացի: Ճաշի սեղանը դնում էին, ուտում, պրծնում էին, խանումս էդ փշրանքները լցնում էր մի ամանի մէջ, վրան ջուր էր լցնում, փշրանքները փափկում էին, իմ առաջ էր դնում, ասում.- Յէ՛, գյաւուր դըզը (Կեր, գյաւուր աղջիկ):

Եւ քահանան կովը բեմ բարձարացրեց եւ վարագոյրը քաշեց նրա վրայ: Երբ նրանք եկեղեցի մտան եւ նստեցին, այն ժամանակ կինը բարձրացրեց վարագոյրը եւ կովին ասաց.

-Ո՞վ գարշելի, ես քեզ կով գիտէի, եւ այժմ քեզ ո՞վ արեց պատարագիչ, ասա՛ ինձ:

32.Գայլը, աղւետը եւ ջորին

Գայլը, աղւետը եւ ջորին եղբայր եղան եւ գնացին. երբ սովեցին եւ որսի չհանդիպեցին, ասացին.

-Եկէք ուտենք նրան, ով տարիքով փոքր է:

Այսպէս ասացին գայլը եւ աղւետը, որովհետեւ կամենում էին ջորուն ուտել: Եւ գայլին հարցրին, թէ ո՞ր տարւայ գայլն ես, եւ նա ասաց, թէ.

-Ես այն գայլն եմ, որին Նոյը տապանն առաւ:

Եւ աղւետն առաջ եկաւ եւ ասաց.

-Օ՛, դու տասը ազգով ինձանից փոքր ես, եւ ես այն աղւետն եմ, որին Աստուած ստեղծեց:

Եւ ջորին եկաւ եւ ասաց.

-Իմ ծննդեան թւականը գրւած է սմբակիս վրայ. եկէք կարդացէք, տեսէք քանի տարեկան եմ:

Եւ ոտքը բարձրացրեց:

Աղւետը ասաց գայլին.

-Գիտեմ, որ դու դպրոցում եղել ես, արի գիրը կարդայ:

Եւ գայլը հաւատաց եւ գնաց կարդալու: Եւ ջորին ասաց.

-Առաջ արի՛, որովհետեւ գիրս մանր է:

Եւ նա առաջ գնաց, եւ ջորին սատիկ ուժով զարկեց գայլի ճակատին եւ ջախջախեց, եւ գայլը գնաց կաղկանձելով: Եւ աղւետը ասաց գայլին.

-Արի՛ մի տող էլ կայ, այն էլ կարդայ:

Գայլն ասաց.

-Ես ի՞նչ գիտէի գիրը. մենք ազգէ ազգ մսագործ ենք եւ մսագործի որդի:

33.Անգամ կինը

Մի մարդ տրտում նստել էր քարի տակ եւ քնեց մի պահ եւ զարթնեց եւ չէր ուզում տուն գնալ: Եւ հանկարծ եկան երկու ճնճղուկ նստեցին քարին եւ մարդուն հարցրին, թէ ինչո՞ւ նա տրտում է: Եւ մարդն ասաց, որ տրտում է, որովհետեւ աղքատ է: Ճնճղուկներն ասացին.

-Կը խոստանա՞ս երբէք չասել ոչ ոքի, եթէ քեզ ոսկու տեղ ցոյց տանք:

Եւ մարդը խոստացաւ եւ երդեց, եւ նրանք ասացին.

-Այդ քարի տակ եօթ կարաս ոսկի կայ թաղած, հանիր եւ տուն տար եւ եթէ ասես մէկին, թէ որտեղից է ոսկին, իսկոյն կը մեռնես:

Եւ մարդն ուտրախացաւ, գնաց իւր տուն, բրիչն առաւ եւ գիշերով եկաւ գաղտնի հանց ոսկին եւ տարաւ տուն, սկսեց փարթամանալ եւ շքեղ տներ շինել, ունեցաւ ձիեր եւ ջորիներ

Մշակութային

Վարդան Այգեկցի

31.Գող քահանան եւ այրի կինը

Մի քահանայ գողացաւ այրի կնոջ կովը եւ ախտը կապեց: Եւ կինն իմացաւ եւ քահանային ասաց.

-Տէր հայր, հասաւ իմ մահւան ժամը. գնանք ախտը, որ խոստովանեմ մեղքերս:

Եւ այն ժամանակ քահանան կովը տարաւ ներսի տուն, այնտեղից ժամատուն եւ այնտեղից եկեղեցի: Եւ կինն ասաց.

-Տէր հայր, վերջին խոստովանութիւնը մահից առաջ պէտք է անել եկեղեցում:

եւ եզներ եւ ոչխարի հոտեր եւ այլ ամենայն ինչ, որ վայել է աշխարհ սիրողին:

Եւ մի օր եզն ասաց միւս եզան, թէ.

Ես ի՞նչ անեմ, ամէն օր անխնայ լծում եմ ինձ: Էջը, որ նրան մոտիկ էր, ասաց.

-Վաղը սուտ հիւանդ եղիր եւ հազա: Երբ այդ տեսնեմ, կը խղճան եւ այլեւս քեզ չեն լծի:

Եւ այս լսելով, մարդը ծիծաղեց եւ մշակներին ասաց, թէ այսօր չէ, վաղը, այսինչ նշան էջը հիւանդ եզան տեղ լծէք: Մշակն առաւօտեան էջը տարաւ եւ լծեց մինչեւ իրիկուն եւ երբ տուն եկաւ, էջն ասաց հիւանդ եզան.

-Ողորմելի եզնուկ, դու չգիտես, թէ արտուն ինչ էին ասում. ասում էին, թէ այն հիւանդ եզը վաղը մորթենք, որ չսատկի: Լսիր ինձ եւ ոտքի կաց եւ առողջ եղիր, գնայ լուծո՞ք քաշիր, որ քեզ չմորթեն: Քեզ համար ատելի լաւ է բանել, քան կեանքից գրկել:

Այսպէս ասաց էջը, որպէսզի այլեւս իրեն չտանեն լծելու, որովհետեւ այդ օրը շատ էր աշխատել: Եւ այս լսելով մարդը նորից ծիծաղեց:

Այն ժամանակ նրա կինն ասաց.

-Ո՛վ մարդ, մենք աղքատ էինք եւ յանկարծ հարստացանք եւ այսչափ ապրանքի եւ բարիքի տէր եղանք եւ ժամ առ ժամ կենում եւ ինքդ քեզ ծիծաղում ես, ինձ ինչո՞ւ չես ասում, թէ որտեղից է այս ամէնը եւ դու ինչո՞ւ ես ծիծաղում:

Մարդն ասաց.

-Ո՛վ դու կին, եթէ ասեմ, իսկոյն կը մեռնեմ, դրա համար չեմ ասում:

Իսկ կինը յանդգնեց եւ ասաց.

-Ճար չկայ, պէտք է ասես:

Իսկ նա չէր ասել, բայց կինը նրան խիստ նեղեց եւ ասաց.

-Պէտք է ասես ինձ, եթէ մեռնես էլ: Եթէ ոչ՝ ես ինձ կը սպանեմ:

Եւ մարդն անճարացաւ եւ ասաց.

-Ո՛վ կին, հաւատայ ինձ, որ առանց տարկուսանքի կը մեռնեմ, թէ որ ասեմ. երբ թոյլ չես տալիս, երեք օր սպասիր, մատաղ անեմ, քահանաներին եւ աղքատներին կերակրեմ, ապա քեզ ասեմ եւ մեռնեմ:

Եւ չար կինը հազիւ յանձն առաւ երեք օր սպասել: Եւ մարդը մորթեց շատ ոչխարներ եւ գառներ եւ կանչեց քահանաներին, կարգաւորներուն եւ աղքատներին, եւ նստեցին ճաշի եւ մինչդեռ ուտում էին եւ ընկում, այն մարդն սպասում էր:

Եւ մարդն ուներ շան լակոտ, որ տան մէջ նստել էր լի տրտմութեամբ սգով, նոյնիսկ արտասուք էր թափում նրա աչքերից: Եւ հանկարծ եկաւ արջը եւ խրոխտալով եւ ներս մտաւ, եւ նրա հետ կային քսան-երեսուն հաւ աքից եւ ձախից: Շան լակոտն սկսեց արջորին ասել.

-Ո՛վ լիրբ անաղուհաց, ի՞նչ ես խրտացել եւ տեսակ- տեսակ ձայն ես հանում. չգիտես, որ մեր տերը վաղը իւր գաղտնիքը պիտի կնոջ ասի եւ մեռնի: Իսկ դու լալու փոխարեն, ուրախ ես:

Աքլորն ասաց.

-Ինձ ինչ, թէ կը մեռնի. ես, որ նրա ծառան եմ, քսան երեսուն կին ունեմ եւ նրանց զաւթ եմ արել, իսկ նա չի՞ կարող մէկին իր հրամանքով պահել:

Շան լակոտ ասաց.

-Ի՞նչ անի անզգամ կնոջը:

Աքլորը ասաց.

-Երբ ամենքը վեր կենան մատաղից, թող առնի երեք չորս փայտ, դուռը փակի եւ կնոջ ասի՝ արի քեզ ասեմ գաղտնիքը եւ նրան բռնի մերկացնի եւ կապի մի սիւնից եւ այքն ծեծի նրա կողերին եւ այլ տեղերին, որ ողջ տեղ չմնայ, ամէնը կապուտկի եւ ասի, թէ չար կին, լաւ է, որ դու մեռնես, քան թէ ես եւ, դռնից հանելով, նրան դուրս վարի, ասելով՝ գնայ կորի, ես այլ կին կամենեմ եւ քեզ չեմ ուզում:

Եւ արջից լսելով այդ բարի խրատը, այն մարդը դարձեալ ծիծաղեց: Եւ անզգամ կինը տեսնելով այդ, ամբոխի մօտեցաւ նրան, չամաչելով ոչ մարդկանցից եւ ոչ քահանաներից եւ մարդուն ասաց.

-Այժմ ինչո՞ւ ծիծաղեցիր, ասա ինձ եւ պատմիր, թէ ինչպէս հարստացար:

Եւ մարդն աղաչեց.

-Մի քիչ համբերիր, թող հիւրերը գնան, եւ քեզ ասեմ, այժմ ամոթ է նրանց առաջ բան ասել:

Եւ երբ ամենքը գնացին, ընտանիքը դուրս հանեց եւ դուռն ամուր փակեց եւ ըստ արջի խրատի՝ ձեռքն առաւ կնոջը, ջարդեց ամէն ոսկորները եւ դուրս արեց: Իսկ կինը զոջալով նրա ոտքն ընկաւ եւ լալով աղաչում էր, ասելով.

-Աստժու սիրուն, ինձ բան մի ասա եւ ամէն օր այսպէս ծեծիր, միայն ինձ դուրս մի անի եւ քեզնից մի հեռացրու, որպէսզի աշխարհուն խաղք չլինեմ:

Եւ այսպէս մահից ազատեց մարդը արջի խրատով:

ՂԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՃՆԵՐ

-Իր աչքի գերանը չի տեսնում, ուրիշի մազը տեսնում է:

-Իր համար քնում, ուրիշի համար երազ է տեսնում:

-Իր տանը կրակ, ուրիշին ճրագ:

-Լավ աշխատողին լավ ապրուստ:

-Լավ հնձվորը դաշտում էլ կհնձի, սարում էլ:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՌԱՇՆԵՐ

-Ով սիրամարգ է ուզում ունենալ, պետք է մեղրություն քաշի, Զնդկաստան գնա:

-Ով ուրիշի պակասը քեզ է ասում, քոնն էլ ուրիշին կասի:

-Որտեղ հաց ու ջուր կա, դրանից լավ տեղ չկա:

-Որտեղ՝ սեր, այնտեղ՝ խանդ:

-Չես տա, չես ստանա:

Ժամանց

1- Ուրախ անկյուն

ԵՐԵՎԱՆԵՆ ԷՐ

Վարդանիկը վագում է հոր աշխատասենյակը.

- Պա, Աշոտիկը գազեթը կուտե:

- Ծո, գնա ձեռից առ, հլը չեմ կարդացել: Գնում է, ուշացումով վերադառնում:

- Պա, երեկվանն էր, թողեցի որ ուտե

2- Արդյոք գիտե՞ք

Նախքան սննդի պատրաստելը միսը պետք է լվանալ, հեռացնել մանր ոսկորները, կոշտ ջլերը եւ արտաքին թաղանթը: Միսը պետք է կտրտել մկանակին թելերի լայնութեամբ:

Միսը պետք է ծեծել թաց տախտակի վրայ, որպեսզի մսահիւթը չներծծւի տախտակի մէջ:

Սառած միսը չարժէ ջրում հետ բերել: Նրան պետք է ջրով լվանալ եւ 2-3 ժամ պէտել փակ ամանում: Հալոցքից առաջացած հիւթը կարելի է օգտագործել եփելու ժամանակ:

3. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1-

Ինչ տաս՝ կուտի, կբորբոքվի,
Լոկ ջրով կավանդի հոգին:

2-

ՈՒղտից մեծ է,

Լվից՝ փոքր:

3-

Խոտը մեռավ,

Ծնվեց նա,

Որ հանդ ու գյուղ միանան:

4-

Երկար է, բայց ստվեր չունի,

Հավաքվել ու ծավվել չունի,

Սկսվում է ամենքի հետ,

Ինքը սակայն ավարտ չունի:

5-

Տերը գնաց,

Ինքը մնաց:

Պատասխան.

1- Կրակ 2- Հրդեհ, կրակ 3- Կածան

4- ճանապարհ 5- Հետք

Առողջապահական

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԴԵՂԱՏՈՍՄԵՐ

Նախորդ օրվա «խրախճանքի» տիպի հետեւանքները վերացնելու համար խորհուրդ է տրվում առավոտյան քաղցած վիճակում խմել մեկ բաժակ տաք կաթ:

* * *

Առատ արնահոսության, ցավոտ դաշտանի դեպքում խորհուրդ է տրվում օգտագործել դաշտային ձիածետ: Մեկ թեյի գդալ դաշտային մանրացրած ձիածետը եռացնել երկու բաժակ ջրում, եփելուց հետո ընդունել երկու ժամը մեկ, 1 ճաշի գդալ: Արնահոսությունը նվազելուց, ցավերը դադարելուց հետո, ընդունել օրը երեք անգամ:

* * *

Ցավոտ դաշտանի, արգանդային արնահոսության դեպքում խորհուրդ է տրվում, որպես արյունարգել միջոց, օգտագործել ջեապղպեղի լուծույթ: Մեկ ճաշի գդալ կտրատված ջրապղպեղը լցնել մեկ բաժակ եռացող ջրում եւ թրմելուց հետո ընդունել օրը երեք անգամ, ճաշի գդալով:

* * *

Արգանդի արնահոսության դեպքում ընդունել չորացած ճնճղապաշարի եփուկը, որը կծկում է արգանդի մկանները: 1Օ անգամ ճնճղապաշարը լցնել քառորդ լիտր ջրում, եփել, ինչպես թեյ եւ ընդունել ճաշի գդալով, օրը երեք անգամ:

* * *

Ցավոտ դաշտանի, արգանդային արնահոսության դեպքում՝ 1Օ բաժակ եռացող ջրում լցնել 3-5 գնդածաղկի չորացած արմատ եւ պատրաստել եփուկ: Ընդունել օրը երկու անգամ, կես-կես բաժակ: